

անանայ: Այս Յայտարարութիւնն ամէն կողմ շատ լաւ տպաւորութիւն թողոց: — Աղեքսանդր Կայսեր մարմինը մեծ շքով խրիմէն Փեթերսպուրկ փոխադրուեցաւ, ուր եւ թաղուեցաւ մեծաշուք փառաւորութեամբ ամիսոյ 19ին: Թաղման ներկայ էին Դանիոյ, Յունաստանի եւ Սերպիոյ թագաւորները, Մոնթենէկոյի իշխանն եւ ամէն Վեհապետաց յատուկ ներկայացուցիչները:

Հանգուցեալ Աղեքսանդր Գ. Կայսրը Աղեքսանդր Բ. Կայսեր երկրորդ որդին էր, եւ ծնած էր 1845 Մարտ 10ին: Իւր Նիկողայոս աւագ եղբոր վաղահաս մահունէն (1865) ետքը թագաժառանգ հրատարակուելով՝ պետական այլեւայլ պաշտօններ ծնողն առաւ՝ վարելու: 1866ին պատկուեցաւ Դանիոյ Քրիստիան Թ. թագաւորին Տակմար դստեր հետ: Աղեքսանդր Գ. կը թողու հինգ զաւակ. զՆիկողայոս Ալեքսանդրովիչ իրեն յաջորդ, զՄեծ-Իշխան Գէորգ՝ այժմ թագաժառանգ, զՄեծ-Իշխանուհի Բեսնիա, զՄեծ-Իշխան Միքայէլ եւ զՄեծ-Իշխանուհի Օլկա: Հանգուցեալ Չարը զարքարծրացաւ 1881 Մարտ 27/14ին՝ իւր հօրը մահունէն ետքը: Իւր չորեքտասանամեայ կառավարութեան ատեն խաղաղութիւնն պահելու եւ իւր պետութիւնը զարգացնելու աշխատեցաւ՝ եւ այն մեծ յաջողութեամբ:

Անցեալ ամիսոյ 27ին հեռագիրը հաղորդեց Գեորմանիոյ Ատենադպրին կոմս Բափրիվիի, եւ Բրուսիոյ պաշտօնէից զահերիցուն՝ Նւլենպուրկ կոմսին՝ իրենց պաշտօնէն հրաժարին ու Վեհ. Կայսեր անոնց հրաժարականն ընդունին: Այս երկու նշանաւոր քաղաքագէտներու յանկարծական ու միաժամանակեայ հրաժարման պատճառը թէ եւ այլեւայլ կերպով մեկնուեցաւ, քայց ստոյգն սա կ'երեւայոր այս երկու անձնաւորութեանց մէջ կարեւոր ու կենսական ինտիւրները լուծելու կերպին նկատմամբ փոխանակ կարծեաց համաձայնութեան կարծեաց տարբերութիւն կը տիրէր, որ ի միասին գործելն անկարելի կ'ընէր: Բափրիվիի — որուն պաշտօնավարութիւնը չորս տարի տեւեց — եւ Նւլենպուրկի

պաշտօնները միացան յանձին Հոհենլոյնէ ծնունդի իշխանի, որ Էլզաս-Լոթրինկէնի կառավարն էր: Հիտովիկ Հոհենլոյնէ ծնած է 1819ին, եւ 1846է սկսեալ պետական այլեւայլ կարեւոր պաշտօններ վարած է: Էլզաս-Լոթրինկէնի փոխարքայութիւնը ստանձնելէ յառաջ Փարիզի գերմանական ղեւապանի ղժուարին ու պատասխանատու պաշտօնը (1874—1885) վարած է ամենայն յաջողութեամբ: — Էլզաս-Լոթրինկէնի փոխարքայութեան պաշտօնն ստանձնած է այժմ իւր մէկ ուրիշ ազգականը:

Ծննական - ծափունական պատերազմն այժմ՝ այնպիսի կերպարանք մ'առած է որ ծննացիք խաղաղութիւն հաստատուելու համար եւրոպական պետութեանց միջամտութեան դիմելու ստիպուած են, քայց եւրոպական պետութիւնը չեզոքութիւն պահելու միտեալ ըլլալին իմացուցած են: Միաբանեալ Նահանգաց կառավարութիւնն է միայն, որ միջամտութիւն ընելու պատրաստ ըլլալն յայտնած է: — Շորազոյն հեռագիրը՝ ծափունացոց Փրլոթ-Արլթուրն երկար յարձակումէ ետքն առնուլը կը հաղորդեն:

## ՔՐՈՎԱՆԴԱՊՈՒԹԻՒՆ

### ՌԻՍԻՆԻՍԿՆՆԵՐ

ԳՐԱՆԿԱՆ — Հայ տպագրութեան ամենահին երախայրից մ'ալ (Պատկերաւ. 357: — «Հայեկ» եւ «Շտեմարան», Երազիցը Հնդկահայոց, 363: — Առ կորնթացիս երրորդ անվաւերական թուղթը, 365: — Ազգային հրատարակութիւնը 1893 տարւոյ. Ա, Բ, 367:

ԲԱՆԱՏԵՆԴՈՎԱՆ — Այլաբանական պատկերներ, 372: — Ցիլուցան խորհուրդը, 378: — Ողջուն առ ծով, 378:

ԿԵՆՍԱՅՐԱՎԱՆ — Բաւլաքի (Պողոս) Բժիշկ Շաշեան (Պատկերաւ.), 379:

ՀՆԱՅՈՍԱՎԱՆ — Հաթեան արձանագրութեանց մասին դիտողութիւնը, 383:

ՈՒՂԵՐԳԱՎԱՆ — Սեւ ծովու ռուսական եզերքը, Ժ, 384:

### ՇԵՆԻՆԵՐ

ՄԱՆՐԱՆՈՒՐ — Տգրուկը զուլակ օղոյ, 386: —

Կողոնեան ջրոյ նստիչը, 386:

ՏՆՏԵՆԱՎԱՆ — Զուռ, 386:

ՆՈՐԱՆՈՒՐ — Ռուսաստանի ընկալաց թիւը, 387:

### ՔՐՈՎԱՆԿԱՆ ՏԵՄԻՆԻՒՆԻՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱՎԱՅԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ՆՍՐԱԳԻՐ

## Գ. ԲԱՓԱՆԵԼ Վ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ. ՄԻՒԻԲԱՐԵՆ. ՑԱՐԱՆ